Ս․ Ստեփաննոս Թագաւորն Հունգարիոյ կառոյց զեկեղեցիս և փառաւոր վանօրայս յԵրուսաղէմ (1002) ։

ԳԼՈՒԽ ԺԶ․

Ծառայութիւն և կոտորումն քրիստոնէից ։ Աւերումն տաճարին Ս․ Յարութեան և նորոգումն նորին ։ Հրաժարումն Մեսրոպ եպիսկոպոսի ։ Արսէն եպիսկոպոս ։ Բարձումն իշխանութեան Ֆաթիմեանց յԵրուսաղէմ և վերստին տիրել նոցին ։

ՅԱՒՈՒՐՍ Վասլի կայսեր Յունաց եղեւ խոտորումն Զատկի ընդ Յունաց, որ ասի Ծռազատիկ․ զի Յոյնք 'ի բաց թողեալ զտումարն Անդրիանոսի ընկալան զտումարն Իրոնի, զոր արարեալ էր 'ի չորրորդի դարուն ։ Եւ եղեւ խռովութիւն մեծ յաշխարհին Յունաց մանաւանդ յԵրուսաղէմ․ զի Յոյնք տօնեցին զՊասէքն 'ի տաճարին Ս․ Յարութեան միով եօթնեկաւ յառաջ քան զՀայս և զայլ քրիստոնեայս յաւուր Ծաղկազարդի և կանթեղք Գերեզմանին Քրիստոսի ոչ վառեցան յայնմ ամի, ասէ Մատթէոս Ուռհայեցի․ Երես 32 ։ Եւ 'ի լինել այսպիսի կռուոյ և հակառակութեան 'ի մէջ քրիստոնէից՝ զայրացեալ այլազգեաց քաղաքին, սուր եդեալ կոտորեցին զնոսա 'ի տաճարի անդ, որք էին ոգիք իբրեւ 10,000 և լցաւ Ս․ Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորաց, և մինչեւ ցայսօր լցեալ կան ոսկերք նոցա յայրի անդ յարեւմտից կուսէ քաղաքին Երուսաղէմի, զոր այժմ մանկանց նշխարք կոչեն․ (1006) ։

Զտեղին զոր ցուցանէ Ուռհայեցին, են անդ արդարեւ բազում այրք և բուրգք և գմբեթաւոր գերեզմանք իշխանաւորացն այլազգեաց Եգիպտոսի և բովանդակն է գերեզմանատուն այլազգեաց, և կոչեն զտեղին յանուն Սրբուհւոյն Մամելլայ․ սակայն տեղի ոսկերաց քրիստոնէից չէ յայտ ։ Աստ է եւ մին յաւերակաց վանօրէիցն Հայոց, ուր 'ի ժամանակի մերում գտաւ գիր հայերէն Արեւելցի Սարգիս վարդապետ, զոր իմացեալ Յունաց եղծին զնա 'ի քակել զորմունս նորին Բդեշխի քաղաքին, և առնուլ զքարինս 'ի շինութիւն կրպակաց ։